

հիւսիսային արեւելեան անկեան կողմը, դէպի արեւելք, հողի տակ կը գտնուի ստորերկրեայ տեղ մը, ուր ի սկզբան ապաստանած են Յրանչիսկեանք:

7. Ս. Հրեճսակապետի վանքին մի քանի հին վասսակաւորները.

ԺԳ. դարու քառորդէն մինչեւ ԺԵ. դարու կէսը, յիշատակարաններու նայելով՝ Ս. Հրեշտակապետի վանքը աւելի բարգաւաճ վիճակ մը ունեցած է, մասնաւորապէս ունեցած է պայծառ դէմքեր ու վաստակաւորներ՝ որ կարեւոր գործունէութիւն մը ունեցած են այս վանքին մէջ, մանաւանդ դաւանական խնդրոց առթիւ: Կ'ուզենք յիշել այդ շրջանին մի քանի գլխաւոր դէմքերուն անունները իրենց համառօտ գիծերով.

1⁰. Յովնաննէս Վրդ. 1215 ին, իբր իր զբասիրութեան հետեւանք նոյն վանքին մատենադարանին կը նուիրէ Նաայի Մարգարիի և Գործք Առաքելոցի ձեռագիրները:

2⁰. Ստեփաննոս գրիչ (երկայն) Ս. Հրեշտակապետի մէջ 1316 ին կ'ընդօրինակէ ձաշոց մը:

3⁰. Անաննէս գրիչ մը, Դաւիթ Ա. Պատրիարքի օրով, 1316 ին կ'ընդօրինակէ ձաշոց մը:

4⁰. Մասքիս կրօնաւոր, Դարսևաղցի, 1318 ին նոյն վանքին մէջ կը կազմէ ձաշոց մը:

5⁰. Ներսէս արեղայ Կրակցի, նշանաւոր գրչազրոյց մը, որ 1331 ին նոյն վանքին մէջ կ'ընդօրինակէ ձաշոց մը. ունի նաեւ ուրիշ ընդօրինակութիւններ:

6⁰. Կարապէտ արեղայ Խարբերոցի, փիլիսոփայ (երգեցող), 1332 ին դարձեալ նոյն վանքին մէջ կ'ընդօրինակէ Մեկն. Կարողութիւնը գիրքը որուն յիշատակարանին մէջ (ձեռ. Թ. 229) կը յիշէ օրուան պատրիարքը՝ Վարդան արքայապետ, անոր եղբորորդին Մարտիրոս ֆանաւան, իր Կիրակոս ուսուցիչը և միաբաններ՝ որոնք են, Կարապէտ Վրդ., Ստեփաննոս, Պետրոս և Պօղոս, Գրիգոր, Կարապէտ, Ներսէս, Սարգիս, Թորոս, Գրիգորիս, Մասքիս, Յովսէփ կրօնաւոր, միանձունք՝ Բարսեղ, Կիրակոս, Թուրքի կոկոզ Մանուկ, Թարսիս, Սարգիս, Ղազար, Ստեփաննոս Չուրխակ, Տոնեթ, Յովնաննէս փակակալ, Թորոս խոստովանահայր, գրչազրոյցին ծնող-